ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 ապրիլի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

55
(2721)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 16

Հերթական անգամ իշխանության ներկայացուցիչներն անում են հայտարարություններ, որոնք հակասում են միմյանց: Այս անգամ խոսքը վերաբերում է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանին, ում հայտարարությունները հակասել են ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի խոսքերին: Մասնավորապես, Գրիգորյանն ապրիլի 13-ին հարցազրույց է տվել «Սիվիլնեթ»-ին եւ հայտարարել է, թե ՀԱՊԿ-ի կողմից ՀՀ-ին առաջարկվող օգնության նախագծում սպառազինության աջակցություն չէր նախատեսվում: «Հայաստանն այս պահին բոլոր տեղերում փնտրում է զենք եւ զինամթերք: Չի կարող որեւէ տեղում զենք-զինամթերքի տեսքով Հայաստանին օգնություն առաջարկվել, եւ Հայաստանը հրաժարվի»: Եվ հենց այս հայտարարությունն էլ հակասում է Արարատ Միրզոյանի խոսքերին: Բանն այն է, որ Արարատ Միրզոյանը դեկտեմբերի 7-ին՝ Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, անդրադարձել էր ՀԱՊԿ կողմից առաջարկվող փաստաթղթերի բովանդակությանը եւ հայտարարել էր. «Քննարկվող որոշման մեջ դիտարկվում էր նաեւ Հայաստանին ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու հարցը, բայց մեզ համար առաջնայինը քաղաքական գնահատականն էր՝ արձանագրումը մեր դաշնակիցների կողմից, որ տեղի է ունեցել ներխուժում ՀՀ տարածք, այունհետեւ կարող ենք դիտարկել մնացած միջոցները՝ քաղաքական ճանապարհով հարցի հանգուցաձուլում, ադրբեջանական զորքերի հետքաշման ապահովում, ռազմատեխնիկական աջակցություն...»: Այսպիսով, Արմեն Գրիգորյանի եւ Արարատ Միրզոյանի հայտարարությունները հակասում են միմյանց:

Երեքշաբթի օրը խորհրդարանում թեժ է լինելու: Այդ օրը ԱԺ են գալու Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները: Ինչպես հայտնի է, ԱԺ-ն երեքշաբթի օրը արտահերթ նիստ է հրավիրելու, որի ընթացքում «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին» զեկույցը պետք է ներկայացվի: Ահա այդ օրը վարչապետն անձամբ պետք է գա խորհրդարան, ներկայացնի կառավարության ողջ կատարողականը, ինչպես նաեւ պատասխանի պատգամավորների հարցերին: Նախարարներից մի քանիսը եւս անհրաժեշտության դեպքում կանդրադառնան իրենց ոլորտներին, կներկայացնեն ոլորտի առաջնահերթությունները, խնդիրները, այնուհետեւ նրանք եւս կպատասխանեն պատգամավորների հարցերին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը արտահերթ նիստի նախօրեին ֆրակցիայի նիստ կանի, որպեսզի քննարկվեն արտահերթ նիստի օրակարգի հետ կապված բովանդակային եւ տեխնիկական հարցերը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, թե որ նախկին եւ ներկա պաշտոնյաները ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի գործով կհրավիրվեն հակակոռուպցիոն դատարան եւ կհարցաքննվեն: Այսպիսով, նրանք են ՊՆ նախկին Նախարար Սեյրան Օհանյանը, Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը, ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը եւ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Նշենք, որ Գլխավոր դատախազությունը երեկ պաշտոնապես հայտնեց, որ ՀՀ գլխավոր դատախազությունը Արցախի պատշպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկել է դատարան: Հիշեցնենք՝ օգոստոսի 30-ին Միքայել Արզումանյանը ձերբակալվել էր Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու մեղադրանքով: Ըստ ՔԿ-ի՝ գեներալ-լեյտենանտը 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ը Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, ինչը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: Օգոստոսի 31-ին Արզումանյանի ձերբակալման ժամկետը լրացել էր, նա ազատ էր արձակվել, սակայն նրան կալանավորելու միջնորդություն էր ներկայացվել դատարան, եւ սեպտեմբերի 1-ին Արզումանյանը կալանավորվել է: Նշենք, որ Արզումանյանը ՊԲ հրամանատար նշանակվեց 44-օրյա պատերազմի վերջին փուլում՝ 2020թ. հոկտեմբերի 27-ին՝ փոխարինելով Ջալալ Հարությունյանին. նա պաշտոնից ազատվեց 2021թ. սեպտեմբերին:

ՀՀ կառավարությունը հերթական կասկածելի նախագիծն է հաստատել ապրիլի 13-ի իր նիստում. այդ օրը ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից 895 մլն 514 հազար դրամ է փոխանցվել ՀՀ «Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «Ռազմավարական հետազոտությունների իրականացում եւ առաջարկությունների ներկայացում» միջոցառմանը: Ընդ որում՝ նախագծի մեջ 2-րդ-ից 4-րդ կետերը գաղտնի են, եւ միայն հիմնավորման մեջ նշվում է, թե առաջնահերթությունների վերանայմամբ պայմանավորված է նման որոշում կայացվել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ֆինանսների նախարարությունը վերապահումներ է ներկայացրել այս նախագծի վերաբերյալ, դրանք ընդունվել եւ խմբագրվել են, եւ, միեւնույնն է, նման որոշում է կայացվել: Ֆինանսների նախարարությունը նշել է, թե դիտողություններ ունի, եւ այն ներկայացվել է նախագծի գաղտնի հատվածում: Հավելենք, որ գումարի ծախսի նպատակների մասին որեւէ խոսք առկա չէ նախագծում. միայն հավելվածից տեղեկանում ենք, որ գումարը բաշխվելու է որպես ընթացիկ եւ կապիտալ դրամաշնորհներ պետական եւ համայնքների առեւտրային կազմակերպություններին:

ԱՆՀԵԹԵԹՈՒԹՅՈՒՆ Է

ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՎՏԱՆԳ ԿԱ

Ապրիլի 10-ին Սիսիանի Բնունիս համայնքում ադրբեջանցի զինծառայողներ էին հայտնվել: Նրանք մտել էին Սիսիանի բնակիչներից մեկի տուն: ՀՀ տարածք մտած ադրբեջանցի զինծառայողներից մեկը ձերբակալվել էր հենց նույն օրը, իսկ մյուսը միայն երեք օր անց էր հայտնաբերվել խաղաղապահների կողմից. ադրբեջանցի երկրորդ զինծառայողը եւս ձերբակալվել է: Այս դեպքի հաջորդ օրը՝ ապրիլի 11-ին, ադրբեջանական զինուժը կեսօրից հետո կրակ էր բացել Տեղ գյուղի հատվածում ինժեներական աշխատանք կատարող հայ զինծառայողների ուղղությամբ: Հայկական կողմն ունեղել էր 4 զոհ եւ 6 վիրավոր: Թշնամին եւս մեծաթիվ զոհեր էր տվել: «Ժողովուրդ» օրաթերթը ադրբեջանցի դիվերսանտների՝ ՀՀ տարածք ներխուժման եւ Տեղ գյուղում ապրիլի 11-ին տեղի ունեցած սահմանային միջադեպի մասին զրուցել է ՀՀ ՁՈՒ ԳՇ նախկին պետ Մովսես Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, օրեր առաջ՝ ապրիլի 10-ին, ադրբեջանցի երկու դիվերսանտ ներթափանցել էին ՀՀ տարածք: Նրանցից մեկը հաջորդ օրը ձերբակալվել էր, իսկ մյուսը շուրջ երեք օր շրջել էր Սիսիանի գյուղերում, եւ երեկ միայն նա հայտնաբերվեց, այն էլ՝ ոչ թե իրավապահների , այլ քաղաքացիների կողմից: Ի՞նչ գնահատական կտաք սրան, մեր անվտանգությունն այդքան ցածր մակարդակի՞ է, եւ արդյոք իրավապահներն անգործություն չե՞ն ցուցաբերել:

-Իրավիճակին մանրամասն չեմ տիրապետում, բայց շատ վատ է, որ ներթափանցելուց հետո ոչ թե իրավապահներն են բռնում, այլ քաղաքացիներ են հայտնաբերում. սա նշանակում է, որ որոնողական աշխատանքները վատ են կազմակերպված:

-Պարոն Հակոբյան, Նիկոլ Փաշինյանը, կառավարության նիստին անդրադառնալով Տեղ գյուղի սահմանային վերջին միջադեպին, հայտարարեց, որ իջ հանձնարարականները չեն կատարվել, թերացումներ են եղել: Ի՞նչ թերացումների մասին է խոսքը:

-Առանց թերություն հո չի՞ լինում: Արդեն ասել եմ, որ հնարավոր էր այդ միջադեպը կանխել:

-Հաշվի առնելով այդ միջադեպը՝ սահմանային նոր էսկալացիայի վտանգ տեսնո՞ւմ եք:

-Նոր էսկալացիայի վտանգ միշտ էլ կա:

-Իսկ Հայաստանն ունի՞ բավարար ռեսուրսներ դիմակայելու համար:

-Չեմ կարող ասել, քանի որ իրավիճակին չեմ տիրապետում:

-Պարոն Հակոբյան, ի վերջո, Տեղ գյուղի սահմանային միջադեպը զինվորականների՞, թե՞ քաղաքական իշխանության մեղավորությունն է:

-Ամբողջ պետության:

-Կոնկրետ ու՞մ:

-Վերից վար. քննությունը կպարզի՝ ով է մեղավոր:

-Պարոն Հակոբյան, Նիկոլ Փաշինյանը կառավարության վերջին նիստին հայտարարեց, որ Հայաստանը պատրաստ է հետ քաշել զորքերը Հայաստան-Ադրբեջան 1991 թվի սահմանային գծից: Ի՞նչ կասեք այս մասին, ի՞նչ է սա իրենից ենթադրում:

-Դա չլինող բան է այս պահին, անհնար է զորքերի հայելային հետքաշումը:

-Ինչու՞ է անհնար:

-Որովհետեւ դու գտնվում ես պատերազմական իրավիճակում, դրա համար էլ անհնար է, իսկ թե ինչ հետեւանքներ կլինեն, դրա մասին չեմ խոսում: Ես գիտեմ, որ դա չլինող գործընթաց է, դրա համար չեմ էլ ուզում բացատրել՝ ինչը-ինչ է: Մեր եւ Ադրբեջանի միջեւ իրավիճակն այնպես է, որ անհեթեթություն է անգամ դրա մասին խոսելը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԻՆ ԹԵԺԱՑՈՒՄ ԿՈՒՆԵՆԱՆՔ

«Մեր սահմաններն այն աստիճանի թափանցիկ են դարձել, որ ով չի ալարում, կարող է մտնել, կիլոմետրերով առաջ գալ: Սա խոսում է այն մասին, որ մեր անվտանգությունը, հատկապես՝ սահմանների անձեռնմխելիության կոնտեքստում, բարձիթողի վիճակում է»,- ArmLur.am-ի հետ զրույցում դիտարկում է արել ՀՀ նախկին վարչապետ, Կառավարման ակադեմիայի պրոֆեսոր Խոսրով Հարությունյանը՝ անդրադառնալով ադրբեջանցի դիվերսանտների՝ ՀՀ տարածք ներթափանցմանը:

«Ամենազարմանալին այն է, որ իրավապահները եւ ԱԱԾ-ն փնտրում էին դիվերսանտներին, բայց քաղաքացիներն են ի վերջո գտնում նրանց, վնասազերծում եւ հանձնում իրավապահներին. սա իրողություն է »,-արձանագրում է զրուցակիցը:

Խոսրով Հարությունյանն այս միջադեպը դիտարկում է որպես Նախիջեւանի կողմից Հայաստանի վրա ճնշումները բարձրացնելու առաջին փորձ. «Համոզված եմ, որ առաջիկայում Նախիջեւանի կողմից ականատես կլինենք մեծ ճնշումների. սա Ալիեւի կողմից վարվող սողացող ագրեսիայի քաղաքականության վեջ է տեղավորվում »,-ասաց ՀՀ նախկին վարչապետը:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Խորհրդարանն ապրիլի 18-ին՝ ժամը 11:00-ին, պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նիստ կհրավիրի:

Օրակարգում 6 հարց է, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին» զեկույցը, ««Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» նախագիծը:

Պատգամավորները նաեւ դատավորներ պետք է ընտրեն:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է 2 ՄԼՐԴ ԵՎՐՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ

Ուկրաինայի վարչապետ Դենիս Շմիգալը հայտարարել է, որ ԱՄՆ այցի շրջանակներում հանդիպել է Ֆրանսիայի ֆինանսների նախարար Բրյունո լե Մերին, եւ քննարկել են Կիեւին աջակցություն տրամադրելու հարցը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում է Gazeta կայքը՝ վկայակոչելով Շմիգալի Twitter-ի գրառումը:

«Ֆրանսիան պատրաստ է 2 մլրդ եվրո աջակցել Ուկրաինային երկարաժամկետ ծրագրի շրջանակներում»,- գրել է նա:

Ինչպես նշել է Ուկրաինայի վարչապետը, գումարի մի մասն ուղղվելու է պետության վերականգնմանը: Միեւնույն ժամանակ, Շմիգալը չի հստակեցրել, թե ինչ ժամկետում է Ֆրանսիան պատրաստվում Կի–ին համապատասխան ֆինանսական աջակցություն ուղարկել:

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿՑՈՐԴԻ ՀԱՍՏԻՔ

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կստեղծվի Հայաստանի Հանրապետության առեւտրական կցորդի հաստիք: ArmLur.am-ի տեղեկություններով՝ այս որոշումը կայացվել է կառավարության երեկվա նիստում: Կցորդի նստավայրը կլինի մայրաքաղաք Բեռլինում:

Առաջարկվել է նաեւ առեւտրական կցորդի տեղակայումն իրականացնել Բեռլինում տեղակայված Հայաստանի Հանրապետության դեսպանության շենքում:

Հիմնավորման մեջ նշվում է, որ Հայաստանը շահագրգռված է ընդլայնել եւ ամրապնդել Գերմանիայի հետ համագործակցությունը քաղաքական, առեւտրատնտեսական, գիտակրթական, մշակութային եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձեւաչափով:

Հավելենք, որ Հայաստանն առեւտրային ներկայացուցիչներ ունի Իրանում եւ Չինաստանում:

ԿԳՄՍ–ՈՒՄ ԿԱԴՐԵՐԻ ՊԱԿԱՍ Է

ArmLur.am-ը պարբերաբար անդրադառնում է նախարարություններում տիրող իրավիճակին եւ այն հանգամանքին, որ կան թափուր հաստիքներ: Բացառություն չէ նաեւ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

Նախարարությունում մեկ փոխնախարարի հաստիք թափուր է: Այդպիսի իրավիճակ է նաեւ վարչություններում: Թափուր է Բարձրագույն հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետի տեղակալի, նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետի, Հանրակրթության վարչության պետի պաշտոնները:

Նախարար Ժաննա Անդրեասյանը դեռ չունի մամուլի քարտուղար, նաեւ թափուր է իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետի պաշտոնը: Նախարարության պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ թափուր պաշտոններ կան նաեւ բաժիններում: Պետ չունեն պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը, զորահավաքային պատրաստության բաժինը, ընդհանուր բաժինը:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ 11–ՐԴ ՓԱԹԵԹ

Եվրամիությունը պատրաստվում է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 11-րդ փաթեթը ակտիվացնել: Այս մասին երեկ CNBC հեռուստաընկերության հարցազրույցում ասել է ֆինանսական ծառայությունների, ֆինանսական եւ կապիտալի շուկաների կայունության հարցերի հանձնակատար Մեյրիդ Մակգինեսը:

Եվրահանձնակատարը նշել է, որ պատժամիջոցների 11-րդ փաթեթն ուղղված է լինելու առաջին հերթին սահմանափակիչ միջոցների շրջանցման փորձերի դեմ: Ավելի վաղ Politico թերթի եվրոպական պարբերականը տեղեկացրել էր, որ Եվրամիությունը 11-րդ փաթեթի քննարկումը կսկսի կաթոլիկական Զատկից հետո, որը նշվել է անցած հանգստյան օրերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱԿՏԻՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

Հայաստանում է Միացյալ Նահանգների կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական Լու Բոնոն: Նա արդեն հանդիպել է Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյան հետ: Այս դաշտոնին փետրվարին նշանակվելուց հետո սա արդեն ամերիկացի դիվանագետի երկրորդ այցն է տարածաշրջան:

«Գրիգորյանը Բոնոյին է ներկայացրել ադրբեջանական զինված ուժերի կողմից 3 օր առաջ Տեղ համայնքի մոտակայքում իրականացված սադրանքը՝ ընդգծելով, որ նման քայլերի միակ նպատակը հայ-ադրբեջանական խաղաղ բանակցություններին ուղղված ջանքերն ի չիք դարձնելն է: Այս համատեքստում Լ. Բոնոն շեշտել է՝ կառուցողական քայլերի իրականացման եւ խաղաղության գործընթացին հավատարիմ մնալու անհրաժեշտությունը հետագա էսկալացիաներից խուսափելու համար»,- հաղորդում է Անվտանգության խորհուրդը:

Լու Բոնոն տարածաշրջան է եկել մեկ շաբաթով: Երեւանում Միացյալ Նահանգների դեսպանատնից հայտնում են, որ դիվանագետը հանդիպումներ կունենա «շահագրգիռ կողմերի հետ՝ հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացին օգնելու նպատակով»:

Արդյոք Լու Բոնոյի տարածաշրջան այցի նպատակներից մեկը Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների միջեւ հանդիպում կազմակերպելն է. այս հարցի պատասխանը չհաջողվեց ստանալ ԱՄՆ դեսպանատնից, սակայն քաղաքական մեկնաբանը նկատում է, որ այս պահին Արեւմուտքի ու Ռուսաստանի միջեւ միջնորդական ջանքերի մեծ մրցակցություն կա: Մոսկվան իր հերթին է փորձում ավելի աշխուժացնել իր մոդերատորությամբ տեղի ունեցող գործընթացը, Վաշինգտոնն իր հերթին է փորձում տեղի ունեցողի՝ միջնորդական ձեւաչափերի հանդեպ իր ազդեցությունը բարձրացնել. նույնիսկ կարող ենք ենթադրել, որ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահի կամ Կովկասի հարցերի գլխավոր բանակցողի այցը հենց պայմանավորված է Վաշինգտոնում արտգործնախարարների նոր հանդիպում կազմակերպելու ձգտումով:

Նախօրեին Ռուսաստանի արտգործնախարարության խոսանկը հայտնել էր, որ Ադրբեջանը եւ Հայաստանը ընդունել են Ռուսաստանում հանդիպելու առաջարկը՝ քննարկելու կողմերի միջեւ խաղաղության համաձայնագիրը:

Նույն օրվա երկրորդ կեսին Հայաստանի արտգործնախարարն էլ ասաց, որ հանդիպումներ ծրագրվում են՝ առանց հստակեցնելու աշխարհագրությունը:

Երեկվա հարցազրույցում Արմեն Գրիգորյանն իր հերթին ասաց, թե երբ հանդիպման օրն ու ժամը հստակեցվի, Երեւանը կհանրայնացնի տեղեկությունը:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԱՅԻԿ ⇨ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով՝ ԱԱԾ տնօրենի տեղակալն ու նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետն ազատվել են պաշտոններից: նախագահի աշխատակազմից:

«Հունան Նելսոնի Հայրումյանն ազատվել է Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալի պաշտոնից՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Վահրամ Արթուրի Պողոսյանն ազատվել է Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ - նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնից՝ իր դիմումի համաձայն»,- ասվում է հրամանագրում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանն ապրիլի 14-ին ընդունել է Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Լուիս Բոնոյին:

Ա. Գրիգորյանը ներկայացրել է ադրբեջանական զինված ուժերի կողմից ապրիլի 11-ին Տեղ համայնքի մոտակայքում իրականացրած սադրանքը՝ ընդգծելով, որ նման քայլերի միակ նպատակը հայ-ադրբեջանական խաղաղ բանակցություններին ուղղված ջանքերն ի չիք դարձնելն է: Այս համատեքստում Լ. Բոնոն շեշտել է կառուցողական քայլերի իրականացման եւ խաղաղության գործընթացին հավատարիմ մնալու անհրաժեշտությունը՝ հետագա էսկալացիաներից խուսափելու համար: Ախ քարտուղարը վերահաստատել է հայկական կողմի հանձնառությունը բանակցային գործընթացին՝ ներկայացնելով առկա խնդիրների կարգավորման հարցում Հայաստանի մոտեցումները:

ՄԵԿՆՈՒՄ Է ԱՐՁԱԿՈՒՐԴ

ՀՀ վարչապետի որոշմամբ՝ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը մեկ շաբաթով մեկնում է արձակուրդ: Գրիգոր Մինասյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում վերջինիս կփոխարինի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանը:

ՀԱՆՑԱՆՔ

ՍՊԱՅԻ ԳՈՐԾՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում ավարտվել է 2020թ. արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում բարձրաստիճան սպայի կողմից զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված առանձնապես ծանր եւ միջին ծանրության հանցանքներ առերեւույթ կատարելու դեպքերի վերաբերյալ քննված քրեական վարույթի նախաքննությունը:

Քննչական խմբի ղեկավարի եւ խմբի քննիչների կողմից իրականացված մեծածավալ քննության արդյունքում դետալային ճշտությամբ վերականգնվել են ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքի, ինչպես նաեւ Շուշի քաղաքի պաշտպանության կազմակերպման ուղղությամբ իրականացված յուրային ստորաբաժանումների բոլոր գործողությունները:

Քննությամբ հիմնավորվել է, որ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմի առաջին օրերին՝ 2020թ. սեպտեմբերի 28-ին, ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող հրամանատարական դիտակետ հանդիսացող «Արեգա» բարձունքն անցել է Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ:

Սեպտեմբերի 29-ին՝ ժամը 07-ի սահմաններում, յուրային ստորաբաժանումների կողմից ձեռնարկվել է հակագրոհ, որի արդյունքում հաջողվել է ոչնչացնել հակառակորդի զրահատեխնիկաները, նշված բարձունքում գտնվող հակառակորդի կենդանի ուժի հիմնական մասը՝ մի քանի տասնյակ զինծառայողի, որպես ռազմավար վերցվել է երկու զրահափոխադրիչ եւ նույն օրը՝ ժամը 09:50-ին, յուրային ստորաբաժանումներին, զոհեր եւ վիրավորներ տալու գնով, հաջողվել է վերահսկողության տակ վերցնել «Արեգա» բարձունքը:

Նույն օրը՝ ժամը 16-ի սահմաններում, բարձրաստիճան սպան «Արեգա» բարձունքի միջնամասում հանդիպել է հակագրոհի օպերացիան ղեկավարած զորամասի հրամանատարի տեղակալներին, օպերացիայում ներգրավված ստորաբաժանման ղեկավարին եւ տեղեկացել իրադրության մասին առ այն, որ «Արեգա» բարձունքը, հարակից մարտական դիրքերը, հակառակորդի թիկունքային ապահովման ճանապարհը գտնվում են յուրային ստորաբաժանումների վերահսկողության տակ: Ապա վերջինս, չունենալով իր վերադասի կողմից նշված վայր այցելելու եւ այդ վայրում որեւէ մարտական առաջադրանք կատարելու վերաբերյալ կարգադրություն կամ հրաման, ինչպես նաեւ այդպիսիք իրականացնելու լիազորություն, օժտված չլինելով հակագրոհի օպերացիայում ընդգրկված՝ յուրային ստորաբաժանումների անձնակազմին հրամաններ տալու լիազորությամբ, օպերացիան փաստացի ղեկավարող սպային անհիմն հրամայել է ենթակա անձնակազմի հետ միասին թողնել ազատագրած «Արեգա» բարձունքը եւ նահանջել:

Վերջինս հրաժարվել է կատարել տրված հրամանը՝ պատճառաբանելով, որ «Արեգա» բարձունքն արդեն իսկ գտնվում է յուրային ստորաբաժանումների վերահսկողության տակ, իրենք զբաղեցնում են գերիշխող դիրք: Բարձրաստիճան սպան կրկին պահանջել է կատարել իր հրամանը, կապ է հաստատել հակագրոհը ձեռնարկած զորամասի հրամանատարի հետ եւ օգտագործելով նախկինում վերջինիս նկատմամբ անմիջական պետ հանդիսանալու հանգամանքը, իր՝ զինվորականի հեղինակությունը՝ պնդել եւ պահանջել է անհապաղ կատարել իր հրամանը՝ ավելացնելով, որ պաշտպանության խորքից է գալիս, իրավիճակին ավելի լավ է տիրապետում:

Զորամասի հրամանատարը ենթակա անձնակազմին հանձնարարել է կատարել բարձրաստիճան սպայի հրամանը եւ նահանջել ազատագրած բարձունքից, որի հետեւանքով հակառակորդն առանց դիմադրության առաջացել եւ նույն օրը՝ ժամը 23:00-ի դրությամբ, վերահսկողության տակ է վերցրել «Արեգա» բարձունքը, հարակից մարտական դիրքերը՝ զբաղեցնելով գերիշխող դիրք: Հետագայում՝ 2020թ. հոկտեմբերի 3-ին եւ 5-ին, յուրային ստորաբաժանումների կողմից «Արեգա» բարձունքը հետ գրավելու նպատակով իրականացված հակագրոհները ձախողվել են, որոնց ժամանակ յուրային ստորաբաժանումները կրել են զոհեր եւ վիրավորներ:

Ունենալով նշված բոլոր տեղեկությունները՝ Մ.Ա.-ն չի հանձնարարել նշված հատվածներում զորք տեղակայել, որի հետեւանքով հակառակորդը, օգտագործելով բնագծի չպահվող հատվածի բարենպաստ հանգամանքը, 2020թ. նոյեմբերի 2-ին՝ կեսօրին, աջ թեւից շրջանցել է յուրային զորքերին եւ առաջացել Շուշի քաղաքի եւ Լիսագոր բնակավայրի միջտարածություն, ինչի մասին նույնպես զեկուցվել է վերադաս հանդիսացող բարձրաստիճան սպային:

Մայրուղու հատվածում հակառակորդի խմբերին դիմակայելու համար համաչափ պաշտպանության կազմակերպման բացակայության պայմաններում նոյեմբերի 4-ին՝ ժամը 02:00-ից 04:00-ն ընկած ժամանակահատվածում, հակառակորդի խմբերին հաջողվել է հատել Շուշի-Լիսագոր մայրուղին, անցնել «Իսահակի Աղբյուր» կոչվող տեղամասի ձորերի ու բարձունքների ուղղությամբ, կուտակել իրենց ուժերը եւ առաջխաղացումը զարգացրել դեպի Շուշի քաղաք:

Ստեղծված իրադրությունը ճիշտ չգնահատելով՝ բարձրաստիճան սպան անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկել լրացուցիչ ուժեր եւ միջոցներ ստանալու ուղղությամբ, Շուշիի պաշտպանողական օպերացիան կազմակերպել է կանոնավոր բանակի ստորաբաժանումների սակավաթիվ ուժերով, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ ստորաբաժանումների ժամանակավրեպ կիրառմամբ, ինչպես նաեւ աշխարհազորի ուժերով: Մինչդեռ նույն ժամանակահատվածում համապատասխան քայլեր ձեռնարկելու արդյունքում Շուշիի պաշտպանողական օպերացիայում կարող էին կիրառվել շուրջ 600 զինծառայողներից բաղկացած կանոնավոր բանակի մարտունակ ստորաբաժանումներ, ինչպես նաեւ զորահավաքային ռեսուրսից զորակոչված զինծառայողներից ստեղծված այլ ստորաբաժանումներ:

Բացի այդ, բարձրաստիճան սպան մինչեւ 2020թ. նոյեմբերի 6-ը ներառյալ վերադասին գրավոր կարգով զեկուցել է, որ շարունակում է խնդիրը կատարել, այդ թվում՝ Շուշի քաղաքի ուղղությամբ, իրադրությունը ներկայացրել է բարդ, բայց վերահսկելի, եւ դա՝ այն պայմաններում, որ նոյեմբերի 5-ին՝ երեկոյան, հակառակորդի խմբերին հաջողվել է ներթափանցել Շուշի քաղաք:

Վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար բարձրագույն սպայական կազմի՝ գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում կրող սպայի՝ Մ.Ա.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 376-րդ հոդվածի 3-րդ մասով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, հսկող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, եւ գործն ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու:

ՎԱՐՈՐԴԸ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ Է

Ապրիլի 14-ին՝ ժամը 08:58-ին, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Սիլիկյան խճուղում տեղի է ունեցել ճՏՊ. անհրաժեշտ է փրկարարների օգնություն:

ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ եւ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ խումբը: Փրկարարները վարորդին պատգարակով մոտեցրել են շտապօգնության ավտոմեքենային, հոսանքազրկել ավտոմեքենան եւ ուղղել այն. տուժածը հոսպիտալացվել է «Արմենիա» ՀԲԿ:

ԼՈՒՐԵՐ

ՓԼՈՒԶՈՒՄ Է ԵՂԵԼ

Ապրիլի 14-ին՝ ժամը 09:02-ին, Շիրակի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Սավոյան փողոցում տեղի է ունեցել փլուզում:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ փլուզվել են չբնակեցված հանրակացարանային շենքի միջհարկային կառուցատարրերը (մոտ 8 քմ). տուժածներ չկան:

Փրկարարները սահմանազատել են տարածքը:

Դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է Շիրակի մարզպետարանի ՏԻ եւ ՀԳՄՀ վարչություն:

ԵՐԿԱՐԱՑՎԵՑ 3 ԱՄՍՈՎ

Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանը մերժել է Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 5-րդ բաժնի պետի պաշտոնը զբաղեցրած Արշակ Հակոբյանի խափանման միջոցը փոխելու վերաբերյալ միջնորդությունը եւ կալանքի տակ մնալու ժամկետը երկարացրել է եւս 3 ամսով:

Սույն դատական նիստին ավարտվել է քրեական դատավարության օրենքի 311-րդ հոդվածով սահմանված քննարկումը, դատարանը նախնական դատալսումների փուլը հայտարարել է ավարտված եւ անցել է հիմնական դատալսումների փուլին:

Նշենք, որ հաջորդ դատական լսումները նշանակվել են ապրիլի 19-ին՝ ժամը 16:00-ին, որի ժամանակ հարցաքննության կհրավիրվեն թվով 5 վկաներ, որոնցից առաջինը կհարցաքննվի Վլադիմիր Գասպարյանը, որը Հակակոռուպցիոն դատարանում քննվող՝ թիվ ՀԿԴ/0036/01/22 գործով հանդիսանում է ամբաստանյալ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴՈՒՐՍ ԿԲԵՐՎԻ ՄԱՍՈՒՆՔԸ

Ապրիլի 15-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակի օրը, որը նաեւ Մասյացոտնի թեմի Մխչյանի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու վերաօծման եւ ուխտի օրն է: Այդ առիթով, ընդառաջ թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի խնդրանքին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցի կբերվի Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը հավատացելոց երկրպագության համար:

Մասյացոտնի թեմի հաղորդմամբ՝ ժամը 10:30-ին կմատուցվի Սուրբ եւ Անմահ Պատարագ հանդիսապետությամբ Մասյացոտնի թեմի առաջնորդ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի: Պատարագին մասնակցելու են նաեւ թեմի հոգեւոր հովիվները իրենց համայնքի ուխտավորների հետ միասին:

Հավարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի հավատավոր ժողովրդին կբաշխվի մատաղ եկեղեցու վերանորոգման բարերար Տիար Արգամ Աբրահամյանի ընտանիքի կողմից:

ՄՈՒՏՔՆ ԱՆՎՃԱՐ Է

Մայիսի մեկից ԿԳՄՍ նախարարության թանգարանների եւ արգելոց-թանգարանների մշտական ցուցադրության այցելությունը մինչեւ 12 տարեկան երեխաների համար կլինի անվճար: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

«12 տարեկանից բարձր երեխաների եւ ուսանողների համար կգործի տոմսի կես գին: Նոր ուսումնական տարվանից էական փոփոխություն կկրի աբոնեմենտային ծրագիրը՝ կապվելով դպրոցական կրթական ծրագրին:

Կկարգավորվի նաեւ աբոնեմենտի շրջանակում թատրոն եւ թանգարան այցելության տրանսպորտային ծառայության հարցը այն դեպքերում, երբ կա դրա կարիքը»,- գրել է նա:

ԴՈԼԱՐԸ ԷԺԱՆԱՆՈՒՄ Է

Ուրբաթ առավոտյան դոլարի արժեքը, մյուս հիմնական արժույթների համեմատ՝ներառյալ եվրոն եւ իենը, իջել է. վկայում են աճուրդների տվյալները: ԱՄՆ-ում գնաճի դանդաղման մասին վիճակագրությունը նպաստել է այն սպասմանը, որ Դաշնային պահուստային համակարգը (ԴՊՀ) կարող է թուլացնել մոնետար քաղաքականությունը եւ ավարտել տոկոսադրույքի բարձրացման ցիկլը:

Եվրոյի փոխարժեքը դոլարի նկատմամբ բարձրացել է՝ 1,107 դոլար՝ անցած աճուրդների ամփոփման 1,1 044 դոլարի դիմաց, դոլարի փոխարժեքը իենի նկատմամբ իջել է 132,38 (132,56-ի դիմաց): Դոլարի ինդեքսը (փոխարժեքը ԱՄՆ առեւտրային գործընկեր վեց երկրների արժույթների զամբյուղի նկատմամբ) իջել է 0,18 տոկոսով՝ 100,83 կետ:

Շաբաթվա սկզբից դոլարի ինդեքսն իջել է 1,25 տոկոսով, իսկ դոլարի հանդեպ եվրոյի փոխարժեքը բարձրացել է 1,6 տոկոսով:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը երեկ մասնակցել է «Համայնքի սոցիալական աշխատողը բարեփոխումների կենտրոնում» խորագրով միջոցառմանը, որի նպատակն է ընդգծել սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրման կարեւորությունը ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների ընթացքում:

Միջոցառմանը, որը կազմակերպվել է «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում, ներկա են եղել նաեւ ծրագրի ղեկավար Աիդա Մուրադյանը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Ժողովրդավարության եւ կառավարման գրասենյակի տնօրեն Քելլի Սթրիքլենդը, ներկայացուցիչներ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություններից:

Ծրագրի ղեկավար Աիդա Մուրադյանի խոսքով՝ բացի սոցիալական ոլորտի մասնագետների եւ կառույցների հետ համագործակցելուց, ծրագիրը կարեւորում է նաեւ կրթության, առողջապահության եւ հարակից այլ ոլորտների ներգրավվածությունը սոցիալական խնդիրների լուծման հարցում:

Այս համատեքստում ԿԳՄՍ նախարարի տեղակալը կաեւորել է միջգերատեսչական համագործակցությունը, որը նպաստելու է խնդիրների լուծմանը: «Սոցիալական աշխատողներն այն մասնագետներն են, որոնք օգնելու են լուծել մեր համաքաղաքացիների՝ տարբեր իրավիճակներում ծագած խնդիրները: Կարեւորում ենք սոցիալական ծառայությունների եւ սոցիալական աշխատանքի կայացումը մեր երկրում, հատկապես այն համատեքստում, որ դա ուղղված է լինելու երեխաներին տրամադրվող բոլոր, մասնավորապես՝ կրթական ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանը: Ուսումնական հաստատություններն այն կառույցներն են, որոնց հետ առնչվում են մեր հասարակության ամենալայն շերտերը»,- ընդգծել է Արաքսիա Սվաջյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալն իր խոսքում անդրադարձել է համընդհանուր ներառական կրթության համակարգին, որն արդեն իսկ ներդրվել է նախադպրոցական եւ դպրոցական ոլորտներում, իսկ այս տարի ներդրվելու է նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից շատերը սոցիալական աշխատանքի կարիք են ունենալու՝ լուծելու համար բոլոր այն խնդիրները, որոնց բախվում են իրենք եւ իրենց ընտանիքները կենսագործունեության կազմակերպման ընթացքում»:

Անդրադառնալով Class ծրագրի շրջանակում միջգերատեսչական համագործակցությանը՝ Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է, որ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնն իրականացնում է ծրագիր, որն ուղղված է ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացմանը. «Ցավոք, շատ հաճախ մեր երկրում տարբեր համակարգեր սկսում են ինքնուրույն զարգանալ, բայց այդ համակարգերի փոխգործելիությունը չենք կարողանում ապահովել: Կարեւորում ենք, որ սոցիալական աշխատանքն ու համայնքային սոցիալական աշխատողները կարողանան խնդիրների լուծման համար ներգրավել նաեւ ուսումնական հաստատություններին: Մյուս կողմից՝ վստահ ենք, որ ուսումնական հաստատություններն ազդակ են հանդիսանալու՝ հասկանալու, թե արդյոք երեխան խնդիր ունի, թե ոչ: Կցանկանամ նաեւ մեկ այլ խնդրի անդրադառնալ. վերջին շրջանում մենք փորձում ենք ավելի հստակ ընթացակարգերի միջոցով հայտնաբերել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին եւ նրանց վերադարձնել կրթական համակարգ: Որքան էլ ուսումնական հաստատությունները ջանք ներդնեն այս առումով, շատ հաճախ առանց սոցիալական աշխատողի աջակցության դա գրեթե անհնար է: Այս հարցում եւս մենք ակնկալում ենք սոցիալական աշխատողների հետ համագործակցություն»:

Հաջորդ խնդիրը, որը ԿԳՄՍ նախարարի տեղակալը կարեւորել է, նախադպրոցական կրթության հանդեպ հասարակության վերաբերմունքի փոփոխությունն է. «Բազմաթիվ հետազոտություններ ապացուցում են, որ այն երեխաները, որոնք նախադպրոցական կրթություն են ստացել, դպրոցում ուսումնառությունը շատ ավելի որակյալ, արդյունավետ եւ սահուն է կազմակերպվում: Մյուս կողմից՝ կարիք ունենք զարգացնելու նախադպրոցական ծառայությունները: Բայց նաեւ նախադպրոցական կրթության նկատմամբ վերաբերմունքի փոփոխման խնդիր ունենք, քանի որ այն կարծրատիպային մոտեցումը, թե նախադպրոցական հաստատությունը զուտ խնամք իրականացնելու վայր է, վաղուց չի համապատասխանում իրականությանը:

Այս առումով եւս ակնկալում ենք սոցիալական աշխատողների օգնությունը՝ իրազեկման բարձրացման տեսանկյունից»:

Նշենք՝ «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագիրը ֆինանսավորում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը եւ իրականացնում են «Վորլդ Վիժն» Հայաստան կազմակերպությունը, Մանկական զարգացման հիմնադրամը, Կանանց աջակցման կենտրոնը եւ «Առնապ» հիմնադրամը: Այն ուղղված է հզորացնելու սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում արդյունավետ համայնքային սոցիալական աշխատանքի միջոցով եւ բարելավելու առավել խոցելի երեխաների եւ նրանց ընտանիքների կյանքը:

ՆՈՐ ՌԵԿՈՐԴ

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԿԳՈՐԾԱՐԿԻ «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՐԵՎ»

Չինական Experimental Advanced Superconducting Tokamak (EAST, HT-7U Superconducting Tokamak) ջերմամիջուկային ռեակտորը կարողացել է մեկ ցիկլի ընթացքում անընդմեջ աշխատել 403 վայրկյան՝ այդպիսով սահմանելով համաշխարհային նոր ռեկորդ, որը գրեթե չորս անգամ գերազանցել է նախորդ ռեկորդը (101 վայրկյան):

Հայտնի է, որ ռեակտորը գտնվում է Անհույ նահանգի Հեֆեյ քաղաքում, սակայն առայժմ տվյալներ չկան այն մասին, թե ինչ ռեժիմով է այն աշխատել եւ ինչ ջերմաստիճանի է պլազման տաքացվել: Ավելին, չկա նաեւ տեղեկություն, թե ինչ պլազմայի մասին է խոսքը՝ էլեկտրոնային, թե իոնային, իսկ դա չափազանց կարեւոր է:

Բանն այն է, որ խոսքը կարող է լինել պլազմայում էլեկտրոնների տաքացման մասին մինչեւ 120 միլիոն աստիճան Ցելսիուս: Այնուամենայնիվ, ռեակտորի պլազմայում ջերմամիջուկային սինթեզի ռեակցիա սկսելու համար անհրաժեշտ է տաքացնել ոչ թե էլեկտրոնները, այլ իոնները ավելի քան 100 միլիոն աստիճան, իսկ դրանք ավելի ծանր են, քան էլեկտրոնները, եւ դրանց տաքացումը պահանջում է գրեթե երկու անգամ ավելի շատ էներգիա: Նախկինում EAST ռեակտորը հաջողությամբ է իրականացրել գիտափորձը, որի ժամանակ էլեկտրոններից կազմված պլազման տաքացվել է մինչեւ 70 միլիոն աստիճան եւ ռեակցիան տեւել է 1056 վայրկյան: Մեկ այլ փորձի ժամանակ էլեկտրոններից կազմված պլազման տաքացվել է մինչեւ 160 միլիոն աստիճան, իսկ ռեակցիան տեւել է 20 վայրկյան: Սակայն իոնային պլազմայի տաքացման ռեկորդը դեռ պատկանում է Հարավային Կորեայում տեղակայված KSTAR ռեակտորին, որը կարողացել է 100 միլիոն աստիճան տաքացված իոնային պլազման պահել 30 վայրկյան:

Հետաքրքիր է, որ չինացիները երկրում չեն գործարկել ջերմամիջուկային ռեակտորի այսպիսի մասշտաբային նախագիծ, ինչպիսին ITER-ն է, թեեւ մասնակցում են դրան: Միեւնույն ժամանակ, արդեն ընդհանուր առմամբ պատրաստ է 2 ԳՎտ հզորությամբ CFETR (China Fusion Engineering Test Reactor) ջերմամիջուկային էլեկտրակայանի նախագիծը, որը նախատեսվում է գործարկել 2035թ.: Այդ ժամանակ եվրոպական նմանատիպ նախագիծը՝ DEMO-ն, դեռ նախագծման փուլում կլինի:

Չինաստանը կարծես պատրաստվում է աշխարհում լինել առաջինը, որը կգործարկի «արհեստական արեւ», ինչը բազմաթիվ փորձագետներ շատ ու շատ հավակնոտ նպատակ են համարում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ճՏՊ. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

«ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՈՒԺԻՆ»

«Ամերիաբանկ»-ն ամփոփում է «Եռակի լավագույնը» արշավը, որը մեկնարկել էր 2022-ին The Banker, Global Finance եւ Euromoney միջազգային առաջատար ամսագրերի կողմից Հայաստանում տարվա «Լավագույն բանկ» ճանաչվելու առթիվ:

Արշավի շրջանակում «Ամերիաբանկ»-ն ամփոփ ներկայացրել է վերջին տարիներին ներդրված թվային բազմաթիվ ծառայությունները, «Ամերիա»-ի եւ գործընկերների ջանքերով իրականացված ծրագրերն ու արձանագրած արդյունքները, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում եւ հնարավորություն են ստեղծել բարելավվելու ինչպես հաճախորդների բանկային փորձառությունը, այնպես էլ կյանքի որակը:

«Ամերիաբանկ»-ի գլխավոր տնօրենի՝ Արտակ Հանեսյանի մասնակցությամբ հոլովակը «Եռակի լավագույնը» արշավի ամփոփիչ ակորդն է, որը յուրահատուկ շնորհակալություն է բոլորին՝ գործընկերներին, հաճախորդներին ու «Ամերիա» թիմին:

«Արժեքները, տեսլականն ու առաքելությունը, որոնց շուրջ համախմբվել են «Ամերիա» թիմը, «Ամերիա»-ի գործընկերներն ու հաճախորդները, շարունակելու են կյանքի կոչվել՝ ի նպաստ Հայաստանի ու մեր երկրում ապրող մարդկանց բարօրության»,- նշում է Արտակ Հանեսյանը:

Հավելենք, որ «Ամերիաբանկ»-ը Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից 2023թ. եւս ճանաչվել է «Լավագույն բանկը» Հայաստանում:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

«Ամերիա»-ն առաջինը Հայաստանում ստեղծել է էկոհամակարգեր ՓՄՁ-ների եւ անհատների համար՝ ապահովելով հասանելիություն բանկային եւ ոչ բանկային մի շարք ծառայությունների մեկ պատուհանի սկզբունքով՝ Estate.ameriabank.am, Automarket.ameriabank.am, Business.ameriabank.am:

Լինելով հաճախորդամետ՝ «Ամերիա»-ն ձգտում է ժամանակակից թվային աշխարհում ապահովել սպասարկման բարձր որակ՝ վստահելի եւ անվտանգ միջավայրում առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲԵՍԹՍԵԼԵՐ»

ԱՅՍ ՇԱԲԱԹՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՍՆՅԱԿ

«Երեւանյան բեսթսելեր» հեղինակային նախագիծն այս շաբաթ ներկայացնում է հայ գրողների գեղարվեստական ստեղծագործությունների լավագույն տասնյակը՝ ըստ մարտի վաճառքի տվյալների:

Առաջին հորիզոնականում է Ռուբեն Եսայանի հեղինակած «Թունելից 13 կմ հեռավորության վրա» վեպը, որը հայկական գրականության առաջին սարսափ-թրիլլեր ժանրի վեպն է: Այն պատմում է Երեւանի պետական համալսարանի ֆակուլտետներից մեկում սովորող մի խումբ ուսանողների մասին, որոնք ուսումնական տարվա ավարտին՝ քննություններից հետո, որոշում են գնալ քաղաքից դուրս, սակայն նրանց մտքով անգամ չի անցնում, թե ինչպիսի սարսափ է նրանց սպասվում այնտեղ...

Երկրորդ տեղում է Սյունե Սեւադայի «Աղի թեյ»-ը. 2019-ի գարնանը երաժշտական աշխարհը ցնցվում է անսպասելի լուրից. համաշխարհային ճանաչում ունեցող երիտասարդ հայ դաշնակահար ու կոմպոզիտոր Իդան ողբերգական ավտովթարի պատճառով հեռացել է կյանքից: Մահից ամիսներ անց հայաստանյան ամենամեծ հրատարակչության հիմնադիրը կապվում է Իդայի օգնականի ու ամենամտերիմ մարդու՝ Նենէի հետ՝ առաջարկելով Իդայի մասին կենսագրական գիրք գրել: Նենէն համաձայնում է, բայց գրվող ամեն էջի հետ բացահայտվում են մանրամասներ, որոնք ստիպում են բացել անցյալի մռայլ էջերը, նորովի ճանաչել մարդկանց ու առերեսվել սարսափելի իրականությանը...

Երրորդ տեղում է Մարկ Արենի եւ Վարս Չարենցի հեղինակած «Դարձյալ սիրո մասին» վեպը: Վեպը հանճարեղ բանաստեղծ, բժիշկ Ռուբեն Սեւակի եւ Յաննի Ապպելի անմահ սիրո պատմությունն է: Ազգակործան դաժան եղեռնի ծանր օրերին Սեւակին փրկություն առաջարկող թուրք պաշտոնյային սառնասրտորեն մերժած Ռուբեն Սեւակը գերադասում է դաժան մահը, քան հավատուրացության միջոցով իր կյանքը փրկելը... Որպես սիրո առանձին հուշարձան ներկայացվող «Դարձյալ սիրո մասին» գրքի յուրաքանչյուր էջ լի է հավերժական սիրով ու սիրո իմաստնությամբ...

Չորրորդ տեղում է «Բարի գործերի քաղաքը»՝ գիրք, որն ընթերցողին կգրավի ոչ միայն իր սյուժեով, այլեւ ժանրային յուրահատկությամբ: Այն գրել են Մարկ Արենը եւ հինգ երիտասարդներ: Նրանում զետեղված փոքրիկ պատմությունները բարության զորեղ ուժի մասին են, այն մասին, թե ինչպես է մի աղջկա արած ֆեյսբուքյան գրառումը շատ արագ տարածում գտնում, մարդկանց հորդորում բարի գործեր անել եւ Երեւանը դարձնում բարի գործերի քաղաք: Նորվարդ Մարտիրոսյանի «Հրեշտակների կածանը» հինգերորդ տեղում է: Վիպակը սոցցանցի միջոցով այրի ուսուցչուհու եւ դաշնակահարի ծանոթությունից ծնված մեծ սիրո մասին է: Գիրքը լի է դրամատիկ դրվագներով, գեղեցիկ բանաստեղծություններով, խոհափիլիսոփայական մտքերով: Վիպակում տողատակով կան թեւավոր խոսքեր, որոնց նպատակն է հասարակության ուշադրությունը սեւեռել արատավոր մի շարք երեւույթների վրա, որոնք մեզ անասելի հեռացրել են մեր ազգային ինքնությունից:

Վեցերորդ տեղում է Աշոտ Աղաբաբյանի «Թակարդ» վեպը: «Թակարդի» գլխավոր հերոսի անուն-ազգանունը հասկանալի պատճառով չի բացահայտվում մամուլում, նա չի երեւում հեռուստաէկրաններին: Նրա եւ նրա նմանների բացառիկ գործողությունների մասին սովորաբար լռում են կամ խոսում միայն տասնամյակներ անց: Երկրի համար ճակատագրական պահին հատուկ պատրաստություն անցած այս եզակի մարդիկ իրենց բացառիկ գործողություններով անուրանալի ծառայություններ են մատուցում հայրենիքին: Սովորաբար նրանց «մոռանում են»: Աշոտ Աղաբաբյանի «Թակարդը» վեպի հերոսը այդ բացառիկ անհատներից մեկն է՝ մեր կողքին ապրող հետախույզ Ջոն Հանիսյանը, որի անհավանական թվացող գործողություններն ու դրամատիկ կյանքի պատմությունն է վեպի հիմքում:

Յոթերորդ տեղում է Գոհար Նավասարդյանի «Ինձ պիոններ չնվիրես» վիպակը: Գիրքն անկեղծ սիրո պատմություն է՝ գրված իրական ապրումների հիման վրա: Վիպակը մի երիտասարդ զույգի մասին է, որը մի քանի անգամ հանդիպում է շատ պատահական: Երիտասարդը սիրահարվում է առաջին իսկ հայացքից՝ մոռանալով, որ միշտ թերահավատորեն է վերաբերվել առանց ճանաչելու դիմացինին սիրահարվելու փաստին: Ինչպես բոլոր զույգերի մոտ, նրանց սերը եւս վախերի, կասկածների, մտորումների, խանդի ու կարոտի մեծ հանրագումար է, որը միշտ շաղախված է անեզր սիրով ու նվիրվածությամբ: Գրքում այլաբանությունները շատ են, առաջին հայացքից սովորական թվացող հարաբերություններում շատ ավելի խորը հարցեր են արծարծվում: Գրքի վերնագրում անգամ փոխաբերական իմաստ կա: Հերոսուհին խնդրում է իր սիրած ծաղիկն իրեն չնվիրել, որպեսզի դրանք հողում մնան, ապրեն ու սիրվեն: Սրա տակ էլ գրքի ողջ իմաստն է. ծաղիկը հողում է գեղեցիկ, թռչունը՝ ազատության մեջ, սերն էլ վանդակում չի շնչում, ուշ թե շուտ կխեղդվի...

Ութերորդ տեղում է Հովսեփ Վարդանյանի «Ագապի»-ն: «Ագապի» վեպը մի անմեղ սիրո պատմություն է, որի գլխավոր հերոսուհին՝ Ագապին, հարում է հայ լուսավորչական դավանանքին, իսկ նրա սիրած երիտասարդը՝ կաթոլիկ: Դավանանքների այդ անտագոնիզմում երիտասարդ աղջկա՝ Ագապիի եւ նրա սիրեցյալի՝ Հակոբի սիրո պատմությունը վերածվում է ողբերգության...«Ագապի» վեպը լույս է տեսել 1851 թ. Կ. Պոլսում հայերեն տառերով, թուրքերեն լեզվով եւ ուղիղ հարյուր տարի մնացել էր անհայտության մեջ:

Իններորդ տեղում է Աշոտ Աղաբաբյանի «Մենակը»: Ըստ հեղինակի՝ այս գրքի միջոցով առաջին անգամ ընթերցողը ծանոթանում է վերջին տասնամյակներում պետական գաղտնիք համարվող մի շարք իրադարձությունների բացահայտումներին, որոնք թեեւ առասպելական են թվում, բայց բացարձակ իրական դեպքեր են: Վեպի հիմքում ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի «գաղտնի» հայտնագործություններն են: Տասներորդ տեղում է Աշոտ Աղաբաբյանի «Ռեզիդենտը»: Այն ամենը, ինչ ընթերցողը կկարդա այս գրքում, շուրջ 60 տարի ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեի արխիվներում ու հետախուզության փակ թանգարանում խնամքով ու ամենայն խստությամբ պահպանվում էր «հույժ գաղտնի»՝ «պահպանել հավերժ», «վտանգի դեպքում այրել» մակագրություններով: «Ռեզիդենտը» փաստագրական վեպը առաջին անգամ հասարակությանն է ներկայացնում պրոֆեսիոնալ հետախույզի հերոսական ոդիսականը:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ՄՐՑՈՒՆԱԿ ՊՐՈԴՈՒԿՏ, ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կոնվերս բանկ»-ը ներդրել է Կոնվերս լիզինգ պրոդուկտը իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար՝ նրանց առաջարկելով տեխնիկական վերազինման հնարավորություն մրցունակ պայմաններով: Հայտի ուսումնասիրման, լիզինգի վերջնական վճար, լիզինգի վաղաժամ մարման վճար չի պահանջվում:

Լիզինգի առավելագույն գումարը 1 մլրդ ՀՀ դրամն է կամ համարժեք արտարժույթը, մարման առավելագույն ժամկետը՝ 84 ամիսը: Այս պրոդուկտի ներդրմամբ «Կոնվերս բանկ»-ը ընդլայնում է ընկերությունների տեխնիկական վերազինման, նոր սարքավորումներով ու դրանց բաղկացուցիչ մասերով համալրման հնարավորությունները: Պրոդուկտը մշակվել է հաշվի առնելով նրանց ֆինանսական հոսքերի արժույթը, կարիքները, հնարավորություններն ու ցանկությունները, ինչից ելնելով լիզինգի ֆինանսավորում է առաջարկվում երեք արժույթով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար եւ Եվրո:

Անդրադառնալով լիզինգի եւ վարկավորման տարբերությանը՝ բանկում նշել են, որ այս պրոդուկտը ավելի նպատակային է: Բանկը գումար է տրամադրում կոնկրետ նպատակի՝ մեքենայի կամ տեխնիկայի ձեռք բերման համար:

Քանի դեռ գումարն ամբողջապես մարված չէ, գնումը համարվում է բանկի սեփականությունը: Ֆինանսավորում ստացած անձը սեփականատեր է դառնում պայմանագրի ավարտին գումարի ամբողջական մարումից: Մանրամասների համար զանգահարել 010-511-211 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ԿԻՆՈՆ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայ կինոն 2023 թվականին նշում է հիմնադրման 100-ամյակը: Հոբելյանի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը մեդալներով եւ շնորհակալագրերով պարգեւատրեց ոլորտում իրենց ավանդն ու ներդրումն ունեցած կինոգործիչներին: ԿԳՄՍ նախարարը, պարգեւատրելով կինոգործիչներին, նշեց, որ երբ այսօր խոսում են հայ կինոյի 100-ամյակից, առաջին հերթին խոսում են կոնկրետ մարդկանց եւ նրանց ներդրման մասին, եւ պետք է արժեւորել այդ ներդրումը՝ արտահայտելով գնահատանքի այն ձեւերով, որոնք կան եւ գործում են: «Չնայած տեխնոլոգիաները եւ ժամանակները փոխվում են, բայց կինոն մեր կյանքում շարունակում է մնալ, կինոն ինչ-որ առումով ներկայացնում է նաեւ արվեստի դեմքը հանրության առաջ»,-ասաց նա: Նա նշեց, որ հոբելյանի առթիվ ձեւավորվել է ՀՀ կառավարական հոբելյանական հանձնաժողով, որի գլխավորությամբ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը նախաձեռնել է տասնյակից ավելի միջոցառումներ եւ ծրագրեր: Ծրագրերն իրականացվելու են 4 ուղղություններով՝ ռազմավարական, միջազգային, հրատարակչական եւ ներքուստական:

Հոբելյանական տարվա մեկնարկը կտրվի ապրիլի 16-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Հանդիսավոր երեկո» միջոցառմամբ: Միջոցառումը կիրականացվի «խոսող» էկրանի միջոցով, որը միջոցառման ամբողջ ընթացքում «կշփվի հանդիսատեսի հետ» եւ առաջին դեմքով «կպատմի» կինոյի մասին՝ ներկայացնելով անցած ուղին ու սպասումները:

Անդրադարձ կկատարվի նաեւ մուլտմիավորման 85-ամյակին: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, շնորհավորելով բոլորին կինոյի 100-ամյակի առթիվ, նշեց. «Կինոն միայն արվեստ չէ, այն անգերազանցելի լծակ, գործիքակազմ է երկրի միջազգայնացման, միջազգային համագործակցությունն ընդլայնելու եւ քաղաքական փափուկ ուժի կիրառման տեսակետից եւ հենց այս գիտակցումից է, որ մենք հոբելյանական տարեթիվը դիտում ենք որպես կինոարվեստի եւ անցյալի վերաիմաստավորման եւ ներկայի խնդիրները մեղմացնելու, ինչպես նաեւ ապագան կանխանշելու մի փայլուն առիթ»,- ասաց Խզմալյանը: Անդրադառնալով հոբելյանական տարվա միջոցառումներին՝ Խզմալյանը կարեւորեց այն, որ միջոցառումները կիրականացվեն նաեւ մարզերում: ««Հայկական կինոդար» ծրագրով ՀՀ 10 մարզում կցուցադրվեն շուրջ 100 հայկական լիամետրաժ եւ կարճամետրաժ, դասական եւ ժամանակակից ֆիլմեր (անիմացիոն, վավերագրական, խաղարկային), որոնց թվում կլինեն նաեւ հայկական կինոժառանգության վերականգնված ֆիլմեր: «Կինոդպրոց Դեբետ համայնքում» եւ «Մարդը բարձրագույն արժեք է» ծրագրերով ՀՀ մարզերում կանցկացվեն կինոաշխատարաններ՝ մանկապատանեկան եւ երիտասարդ սերնդի համար: Երեւանում եւ մարզերում կիրականացվի «Մուլտիպլիկացիոն եւ անիմացիոն կինոյի շաբաթ» ծրագիրը, որի շրջանակում կցուցադրվեն հայկական մուլտիպլիկացիոն եւ անիմացիոն ֆիլմեր, կկայանան հանդիպումներ ստեղծագործական խմբերի հետ, կանցկացվեն վարպետության դասեր, տեղի կունենա երեկո՝ նվիրված Լեւ Ատամանյանին»,- ասաց Խզմալյանը: Նա նշեց, որ «Սամուել Խաչիկիան-100» ֆիլմերի հետահայացք ցուցադրությունն առաջին անգամ կբացահայտի իրանահայ ամենանշանավոր ռեժիսոր Սամուել Խաչիկիանի ստեղծագործական ժառանգությունը, որի լավագույն նմուշներն ամբողջացնում են իրանական կինոյի ոսկե ֆոնդը: «Հայ կինոյի 100-ամյա հոբելյանական ծրագիրը ներառում է նաեւ հեռուստատեսային բովանդակություն՝ «Եվ լողում է նավը» հեռուստահաղորդումը, որը նվիրված կլինի հայկական ժամանակակից կինոյին եւ հեղինակներին: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է հայկական կինոյի երախտավորներին նվիրված ֆիլմաշար, հայկական ֆիլմերի շաբաթական ցուցադրություններ եւ այլ նախագծեր»,- ասաց նա:

Խզմալյանը հավելեց նաեւ, որ Հայ կինոյի 100-ամյա հոբելյանի համատեքստում հարգանքի տուրք կմատուցվի նաեւ կենդանի լեգենդ Արտավազդ Փելեշյանին՝ 85-ամյա հոբելյանի կապակցությամբ: Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանը նշեց, որ վերջին տարիներին բավականին ակտիվացել է կինոգործունեությունը միջազգային եւ համաշխարհային հարթակներում՝ ընդգրկվելով տարբեր կարեւոր կինոթառատոններում: «Միջազգային միջոցառումների շրջանակում Հայաստանի կինոողորտի ներկայացուցիչները կմասնակցեն Կաննի միջազգային կինոփառատոնին կից Marche du Film կինոշուկային, ինչպես նաեւ կինոփառատոնի Cannes Classics ծրագրում կցուցադրվի հայկական կինոժառանգության լավագույն ֆիլմերից մեկը՝ «Բարեւ, ես եմ» (ռեժ. Ֆ. Դովլաթյան, 1965 թ.): Հայ կինոյի 100-ամյակն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների 2022-2023 թթ. օրացույցում»,-ասաց կինոկենտրոնի տնօրենը:

Հայաստանի կինոգործիչների միության նախագահ Հարություն Խաչատրյանն էլ ուրախությամբ նշեց, որ հոբելյանի շրջանակում Կինոմիության դիմաց կստեղծվի աստղերի պուրակ: Նա ընդգծեց, որ վերջին տարիներին կինոգործիչների միությունում իրականացվել է հսկայական փոփոխություններ, այսինքն՝ հայկական կինոյի համար կա հարթակ, որը վերաձեւափոխվել է, ստեղծվել են ժամանակակից տեխնիկայով հագեցած դահլիճներ, որոնք կարող են լավագույն ձեւով ներկայացնել եւ փառատոնները, եւ ֆիլմերը, քննարկումները եւ այլն: «Հայաստանում պետական աջակցությամբ իրականացվող միջազգային կինոփառատոների ծրագրերը եւս հագեցած են 100-ամյա հոբելյանական միջոցառումներով: Նախատեսվում են «Ոսկե ծիրան» միջազգային 20-րդ, «ՄԷԿ ԿԱԴՐ» կարճ ֆիլմերի 21-րդ, «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ, «ՌԵՄԻՄԱՆԻԱ» միջազգային անիմացիոն կինոյի եւ պատկերապատման արվեստի 15-րդ եւ «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի 19-րդ միջազգային կինոփառատոները»,- եզրափակեց Հարություն Խաչատրյանը:

ՍՈԲՉԱԿԻ ՍԿԵՍՐԱՅՐԸ

ՄԱՀԱՑԵԼ Է ՌՈՒՍ ԿԻՆՈԳԵՏ ՅՈՒՐԻ ԲՈԳՈՄՈԼՈՎԸ

Մահացել է ռուս կինոգետ Յուրի Բոգոմոլովը: Նա 86 տարեկան էր: Նրա մահվան մասին հայտնել է որդին՝ Կոնստանտին Բոգոմոլովը, որն ամուսնացած է ռուս հեռուստահաղորդավարուհի Քսենյա Սոբչակի հետ:

«Հայրիկը վաղ առավոտյան մահացավ: Հրաժեշտի օրվա եւ վայրի մասին կգրեմ առանձին»,- գրել է ռեժիսորը սոցիալական ցանցերում:

Յուրի Բոգոմոլովը ծնվել է 1937 թվականի մարտի 9-ին Լենինգրադում: 1965 թվականին ավարտել է ВГИК-ը, ղեկավարել է Известия թերթի մշակույթի բաժինը, եղել է հեռուստասյունակագիր Россиской газета-ում, իսկ 2017 թվականի դեկտեմբերից սյունակներ է գրել Снob ամսագրի համար:

Նշենք, որ դեռ հստակ հայտնի չէ, թե Կոնստանտին Բոգոմոլովի ծնողները ինչ վերաբերմունք են ունեցել նրա ընտրյալ Քսենյա Սոբչակի նկատմամբ: Հայտնի է, որ նրանք Գրիբոեդովսկու ՋԱԳՍ-ում ներկա են եղել զույգի հարաբերությունների պաշտոնական գրանցմանը, հարսին ծաղկեփունջ են նվիրել:

Ըստ որոշ տեղեկությունների՝ նրան ընդամենը մի քանի անգամ են տեսել իրենց որդու բեմադրության ժամանակ:

Կարծիք կա, որ Բոգոմոլովն ընդհանրապես չի հարցրել, թե ինչպես են վերաբերվում իր ընտրյալին. նրանք հապճեպ լքել են հարսանեկան արարողությունը:

ԼՈՒՐԵՐ

ԼԵԴԻ ԳԱԳԱՆ՝ ՆՈՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Նախագահ Ջո Բայդենը «Գրեմմիի» մրցանակակիր Լեդի Գագային եւ պրոդյուսեր Բրյուս Քոենին նշանակել է Նախագահական արվեստի եւ հումանիտար գիտությունների հանձնաժողովի համանախագահներ:

Կոմիտեում ընդգրկված են «վաստակավոր արվեստագետներ, գիտնականներ եւ բարերարներ, որոնք լուրջ նվիրվածություն են ցուցաբերել արվեստին եւ հումանիտար գիտություններին»:

Կոմիտեն վերսկսել է իր աշխատանքը հնգամյա ընդմիջումից հետո. խորհուրդը լուծարվել է Թրամփի վարչակազմի օրոք՝ ի նշան բողոքի նախկին նախագահի պատասխանի 2017 թվականին Վիրջինիա նահանգի Շառլոտսվիլ քաղաքում սպիտակների գերակայության ցույցին: Թրամփն այն ժամանակ ասել էր, որ անկարգությունների երկու կողմերում էլ կան «շատ լավ մարդիկ»:

Սեպտեմբերին Բայդենը ստորագրել է գործադիր հրաման՝ վերագործարկելով կոմիտեն, որը ստեղծվել էր 1982 թվականին նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք՝ որպես Թանգարանների եւ գրադարանային ծառայությունների ինստիտուտի մաս:

Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին նաեւ հեռուստատեսային պրոդյուսեր Շոնդա Ռայմսը, «Գրեմմիի» մրցանակակիր Ջո Ուոլշը եւ դերասաններ Ջորջ Քլունին, Ջենիֆեր Գարները, Թրոյ Կոտզուրը, Ջոն Բապտիստը եւ Քերի Վաշինգտոնը:

Լեդի Գագան կատարել է The Star-Spangled Banner-ը Բայդենի 2021 թվականի երդմնակալության ժամանակ ու նրա հավատարիմ աջակիցն է եղել նրա նախագահական քարոզարշավի ընթացքում:

ԱՄԵՆ ԳՆՈՎ ԿՓՐԿԻ ԴՍՏԵՐԸ

Ջենիֆեր Լոպեսը կանի ամեն ինչ, որպեսզի փրկի իր դստերը Netflix-ի առաջիկա «Մայրը» մարտաֆիլմում: Լոպեսը մարմնավորում է զինվորական պատրաստվածություն անցած մարդասպանի, որը գործարք է կնքում ՀԴԲ-ի հետ, որը թույլ է տալիս նրան թաքնվել Ալյասկայի անապատում, բայց միեւնույն ժամանակ ստիպում է նրան հրաժարվել դստերից:

Տարիներ անց, երբ առեւանգում են դստերը, ում նա երբեք չի հանդիպել, ստիպված է լինում դուրս գալ թաքստոցից եւ որսալ դստերն առեւանգողներին:

Netflix-ը հրապարակել է ֆիլմի թրեյլերը, որի պրեմիերան տեղի կունենա մայիսի 12-ին:

● *Ապրիլի 17-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Էվոլյուցիա» հումորային ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Քոլեջի շրջանավարտը կարո՞ղ է ուսումը շարունակել բուհի 2-րդ կուրսում:

Սիլվա Հունանյան
(39 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հուլիսի 8-ի N 752-Ն որոշմամբ: Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է հետեւյալ կերպ՝ մինչեւ 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը:

Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 եւ ավելի տոկոս կազմող տարբերությունը:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հավակնորդը կամ քոլեջը համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է բուհ մինչեւ տվյալ տարվա օգոստոսի 30-ը: Հատկացված տեղերից ավելի դիմումների դեպքում սահմանված կարգով անցկացվում է մրցույթ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով կարող է օրինականացվել ինքնակամ կառույցը:

Երանուհի Ջիլավյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Ջիլավյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական համայնքների ղեկավարների, համայնքի վարչական տարածքներից դուրս մարզպետների կողմից՝ կառավարության սահմանած կարգով: Ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված կամ վերակառուցված ինքնակամ կառույցների նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը՝ անկախ նրանից, թե ով է այն կառուցել: (ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշում, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 731-Ն որոշում):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հողամասի սեփականատերն է ձեռք բերում իրեն պատկանող հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների եւ այլ անշարժ գույքի սեփականության իրավունք: (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդված):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը հայտարարել է սպասվելիք մեծ պրեմիերայի մասին: Հայ հանդիսատեսին կներկայացվի իտալական շքեղ «ՍԻՐՈ ԸՄՊԵԼԻՔ» կոմիկական օպերան՝ Գաետանո Դոնիցետտի հեղինակմամբ. սերն ու օպերան՝ մեկ բեմում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 4 + 4 + 8
	Կոտայքի լեռներ	- 3 + 1 + 3 + 6
	Կոտայքի նախալեռներ	+ 2 + 5 + 9 +11
	Գեղարքունիք	- 2 + 2 + 4 + 6
	Լոռի	0 + 4 +11 + 14
	Տավուշ	+ 3 + 6 +13 + 16
	Արագածոտնի լեռներ	0 - 3 + 2 + 4
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 + 8 + 12

	Արարատ	+ 9 + 11 + 12 + 12
	Արմավիր	+ 5 + 8 +13 + 16
	Վայոց ձորի լեռներ	+ 5 + 7 +13 + 16
	Վայոց ձորի նախալեռներ	0 - 3 + 2 + 5
	Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +14 + 18
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +10 + 13
	Արցախ	+ 7 + 11 +12 + 16
	Երեւան	+ 4 + 6 +12 + 14

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*